Տ. ՎՐԹԱՆԵՍ ՔԱՀԱՆԱ ԲԱՂՈՒՄՅԱՆ

(ավազանի անունը՝ Վարդան)

Ծնվել է 1982 թ. հուլիսի 18-ին Էջմիածին քաղաքում:

1988-1996 թթ. սովորել է տեղի Վ. Ռշտունու անվան թիվ 11 միջնակարգ դպրոցում:

1996-1999 թթ. ուսումը շարունակել է Էջմիածնի Ներսիսյան վարժարանում:

1999 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց:

2003 թվականից ուսումնառությունը շարունակել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005-2008 թթ. հունիսից աշխատել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում որպես գործավար-քարտուղար:

2007 թ. փետրվար-օգոստոս ամիսներին մասնակցել է Հայաստանի Ամերիկյան Համալսարանի անգլերեն լեզվի դասընթացներին:

2008 թ. մայիսի 4-ին, ձեռամբ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա՝ վերանվանվելով Տ. Վրթանես: